

վարդապետի ի տարին 600 լուրի յարգեանց Մ. Աթոռոյ. 1441:

— Յանուն Տ. Մեսրոպ վարդապետի որով կարգեցաւ նա յաւաք անդամ Կոնսիստորիային Շամախոյ. թ. 1455:

— Յանուն Տ. Յուսիկ վարդապետի Մովսիսեան անդամոյ Սինոդի ա. Էջմիածնի որով կարգեցաւ նա վերահսկող վանուցն ա. Հոփփիմայ. թ. 1456:

— Յանուն Սինոդի ա. Էջմիածնի որով յանձն արարաւ պատուիրիլ թեմակ. առաջնորդոց Ռուսաստանի զի առաքեսցեն առ պ. Մակար Եկեմիւնաց անձինս ընդունակս երաժշտութեան առ ի հրահանգել լինել խմբակեալ քառաձայն երգեցողութեան ա. պատարապի. թ. 1487:

— Յանուն Կոնսիստ. Արցախայ, որով յայտ արարաւ կարգումն Տ. Մատթէոս վարդապետի յաւաք անդամ նորին. թ. 1492:

— Յանուն Տ. Մատթէոս վարդապետի ի նոյն միտս. թ. 1495:

— Յանուն երեցփոխի եկեղեցւոյն Օդէսայի պ. Սիրականոյ Աստուածատրեան որով կարգեցաւ նա ի զանապետ ա. Երուսաղէմի. թ. 1897:

ՊԵՅՏՈՆԵԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ տարւոյս Յուլիս 6 թուակիր և 18 թուահամար պաշտօնական յայտարարութեամբ հրաւիրուում էին թէև այն հեղինակներն ու բանասէրները՝ որք Ազգային Դպրոցութեան և Պատմութեան վերաբերեալ ո՛ր և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ—Մեսրոպեան Դրական մրցանակաբաշխութեան իրենց աշխատասիրութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1899 տարւոյ Յունուարի վերջ, սակայն ըստ նորագոյն անօրինութեան Կտակի Դործադիր Մնայուն Յանձնաժողովոյ յիշեալ պայմանաժամն երկարաձգած է մինչ 1899 փետրուարի վերջ:

Հետեւարար վերստին կը հրաւիրուին Հեղինակներն ու Բանասէրները որ հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպօլիս մինչ որոշեալ պայմանաժամ:


Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ լինին իսկ ձեռագիրք մէկ օրինակ, որք ետ չեն դարձուիր:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ.

11 Նոյեմբեր.—Սինոդը Տէր Ոսկանեան Մեսրոպ քահանային նշանակեց Բաղխանու Հայոց հովիւ, որոշելով նորա համար 100 ծուխ Բաքու քաղաքի մէջ և պատուիրելով որ բաւականնոյ սյղչափով և մնայ նոյն քաղաքի ա. Աստուածածին եկեղեցւոյ միաբան:

11 Դեկտ.—Նորին Վեհափառութեան Սրբաառ Կոնգալիի համաձայն Արժ. Մխիթար վարդապետին նշանակեց փոխանորդ Աղեքսանդրապոլի վիճակի:

18 Դեկտ.—Արժ. Տիրայր վարդապետին խորհեց քննիչ Ամբաստու վանքի թիւեանոց ծառաստանի վարձակալութեան զործի համար և պատուիրեց փութալ քննութեան հետեանքը Սինոդին յայտնելու:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՔՐԻՍՏՈՍ ԻՄԷՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ.

ԱՅՍ աւետարեւր ողջոյնով է սկսում Հայաստանեայց ա. Եկեղեցին իւր եկեղեցական տարին, որ զրեթէ նոյնանում է քաղաքական տարւոյ հետ և մատնացոյց է անում զորանով յայտնութեան այն լոյսը, որ առաջնորդող պէտք է լինի իւր հոգեւոր զաւակներին առաջիկայ ամբողջ տարւոյ և ամբողջ կեանքի առպարիզի վերայ:

Ըրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ ... ողջունում ենք միմեանց ամէն անգամ երբ

Աստուծոյ ասնը խմբուած տեսնում ենք ս. սեղանի վերայ մեր Փրկչի կենդանարար մարմինն ու արիւնը, և արտայայտում ենք զորանով այն ոգեւորիչ գաղափարը թէ Բրիստոսի ս. յայտնութիւնը հեռու մութ անցեալում կորած մի ստուէր չէ, այլ ներկայ է և միշտ նորոգուող՝ խորհրդաւոր հոգեներոգ մի իրողութիւն:

Հին քրիստոնեաները եղբայրական համբոյրով էին հաղորդում միմեանց Բրիստոսի ս. յայտնութեան բերկրաօրէիմ ողջոյնը, և մինչ ուրիշ քրիստոնեաներ բողոքովին մոռացել են այդ գեղեցիկ սովորութիւնը, Հայոց աւանդապահ եկեղեցին նորա յիշատակը պահել է՝ համբոյրը գլխի շարժմամբ փոխարինելով Երանի՛ նոյնչափ լաւ պահուած լինէր ողջոյնի խորհուրդը հայ ժողովուրդի մէջ...

Խորհուրդ մե՛ծ և սքանչելի... որի յայտնութեամբ բոլոր ձորերը լեցուում են լեռներն ու բլուրները իջնում, ուղղուում են բոլոր խորհուրդողութիւնները և քարքարոտ տեղերը հարթ ճանապարհ դառնում, որ Աստուծոյ փրկութիւնն է բերում բոլոր մարմնեղէն էակների համար՝ ...* որ ամբարտաւանների՛ն ձգում է իրենց զօրութեան արձողից և խոնարհներին բարձրացնում:** հաւասարեցնում է իշխանին և ստրուկին, հարուստին ու աղքատին, մեծին ու փոքրին, և ամէնքին միացնում ի մի համայն եղբայրութեան:

Խորհուրդ սքանչելի, որ խաղաղութիւն է սփռում այս նախանձով և ատելութեամբ կռուով և չարութեամբ լի երկրի վերայ՝ հաճ և հաշտ դարձնում եսական շահախնդրութիւններով ու մոլի կրքերով լի մարդկանց սրտերը, որ ամենախիստ սառնամանեաց մէջ ջերմ հոսանք բղխեցնել, մեռելային ապառաւմների զրկում նոր կեանքի սաղմ աճեցնել կարող է...

Թող նա մեր սառը սրտերն ևս ջերմացնէ ու ապառաւ կրճերը կակղացնէ. թող մոռանալ տայ մեր առօրեայ վշտերն ու նեղութիւնները, մեր եսական ցանկութիւններն ու թշնամական զգացումները, և սուրբ սիրով ու խաղաղական ուրախութեամբ լեցուած՝

երգել սախլե, երկնքի հրեշտակների հետ ու զոչել, Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ ... Բրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ ...:



ՂԵՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ.

Եւ իմն պարս ե գործել զգործս
այնորիկ, որ առաքեալս զիս միմէ ա-
ւուր կայ. զայ գիշերս յորժամ ոչ ոք
կարէ գործել:

Յովն. Թ. 4:

ՄԱՐԻԱ սովորաբար ուրախ դէմքերով զիմում են միմեանց շնորհաւոր նոր տարի մաղթելու: Այդ ուրախութիւնը իւր արտաքին կողմերով յաճախ չափազանցութեան է հասնում՝ կեր ու խում, աղաղակ փողոցների վերայ, մինչև իսկ անկարգութիւններ, որ բարոյական աչքի և ականջի համար անախորժ լինել կարող է:

Բայց այսպէս չէ այն մարդկանց համար, որոնք կեանքի վերայ լրջութեամբ են նայում, որոնց ուսերի վերայ սրբազան և վեհ կոչումն է ծանրանում՝ ծառայելու ժողովրդին, ծառայելու յաւիտենական բարեաց գաղափարին: Մոր տարուայ օրը ուրախութեան և զուարճութեան օր չէ, այլ մի սրբազան և նուիրական վայրկեան, երբ մեր հոգու բոլոր զօրութիւնները լարած պիտի բաժանուինք հին տարուց և նորի մէջ մտնելու. քրիստոնեայի համար նոր տարուայ օրը աղօթքի և հոգեւոր հաշուետուութեան օր է Աստուծոյ և խղճի առաջ:

Տարեվերջին հաստատութիւնները փակում են իրենց տօմարները և հաշիւ տալիս աւելի բարձր հաստատութիւնների: Այսպէս պէտք է լինի և անհատը, նա հաշիւ պէտք է տայ Աստուծոյ և իւր խղճի առաջ, թէ ի՞նչ է ձեռք բերել անցած տարուայ մէջ, որ մնայուն է, որ տեւական է և ոչ այնպէս անցաւոր ինչպէս հին տարին էր: Մոր տարուայ շնորհաւորութիւնը յիշեցնում է մեզ, որ հինը անցաւ անդառնալի կերպով, ուստի և